Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն  Ե Վ  Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն  Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍՏԱՍՏՐԱՑՈՒՄՈՒՄՆԵՐԻ

2025

# ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**1** **Ի՞նչ է թերապևտիկ լայնությունը:**

1) դոզաների միջակայքն է՝ նվազագույն թերապևտիկից մինչև նվազագույն տոքսիկը
2) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև նվազագույն թունավորը
3) դոզաների միջակայքն է՝ առավելագույն թերապևտիկից մինչև առավելագույն թունավորը
4) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև մահացու /լետալ/ դոզան

**2** **Ի՞նչ է բորբոքումը:**

1) տեղային նյութափոխանակության խանգարում է, որն առաջանում է հյուսվածքների վնասման հետևանքով
2) բարդ քիմիական պրոցես է, որը զարգանում է վնասված հյուսվածքներում
3) օրգանիզմի բարդ ռեֆլեկտոր ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է տեղային և ընդհանուր փոփոխությունների համալիրով
4) օրգանիզմի բարդ հումորալ ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է անոթների տեղային խանգարումների համալիրով

**3** **Բազմաշերտ տափակ էպիթելով մաշկի ո՞ր շերտն է ձևավորվում:**

1) ցանցային
2) դերմա
3) էպիդերմիս
4) պտկիկային

**4** **Որքա՞ն է տևում մաքիի հղիությունը:**

1) 4 ամիս
2) 3 ամիս
3) 5 ամիս
4) 2 ամիս

**5** **Նշվածներից ո՞րը հելմինթոօվոսկոպիկ մեթոդ** ***չէ:***

1) Բերմանի
2) Տրիխինելոսկոպիայի
3) Ֆյուլեբոռնի
4) Վայդի

**6** **Ինչպե՞ս է կոչվում հաստ աղիքներում կերազանգվածի կանգը:**

1) լիմֆոստազ
2) խիմոստազ
3) կոպրոստազ
4) հեմոստազ

**7** **Նշված հորմոններից ո՞րն է արտադրվում մակերիկամի ուղեղային շերտում:**

1) պլղոստերոն
2) կորտիզոն
3) տեստոստերոն
4) ադրենալին

**8** **Ի՞նչ է տեղի ունենում սիմպաթիկ նյարդային համակարգի գրգռման դեպքում:**

1) սրտի աշխատանքի դանդաղում
2) ստամոքսի հյութազատության նվազում
3) ադրենալինի արտադրության նվազում
4) աչքի բբի նեղացում

**9** **Նշել որոճողների կրծքային վերջավորությունների հոդերի տեղադրման ճիշտ Հաջորդականությունը:**

1.արմունկ, 2.կապ, 3.պսակ, 4.դաստակ

1) 2, 1, 4, 3
2) 1, 4, 2, 3
3) 4, 2, 3, 1
4) 1, 2, 3, 4

**10** **Ի՞նչ է արյունուռուցքը /հեմատոման/:**

1) մաշկի և ենթամաշկային բջջանքի փակ վնասվածքն է, որի դեպքում պատռվում են արյունատար և ավշային անոթները և գոյանում են արյունուռուցքներ
2) ավշային անոթի պատռվածքից գոյացած ավշի կուտակումն է, որի դեպքում պահպանված է մաշկի ամբողջականությունը
3) հյուսվածքների ներծծումն է շճային էքսուդատով, առանց մաշկի ամբողջականության խախտման
4) հյուսվածքների մեխանիկական վնասվածք է, որի դեպքում տեղի է ունենում արյունազեղում և արյունով լցված խոռոչի գոյացում

**11** **Ինչպիսի՞ բիլիռուբին է հայտնաբերվում մեխանիկական դեղնախտի դեպքում:**

1) ուղղակի
2) բիլիվերդին
3) ուղղակի և անուղղակի
4) անուղղակի

**12** **Ի՞նչ է պնևմոթորաքսը:**

1) թոքամիզի ջրգողություն
2) թոքամիզում օդի կուտակում
3) թոքամիզում արյան կուտակում
4) թոքամիզի բորբոքում

**13** **Ինչպե՞ս է կոչվում արգանդի շճային թաղանթի բորբոքումը:**

1) միոմետրիտ
2) պերիմետրիտ
3) պարամետրիտ
4) էնդոմետրիտ

**14** **Տվյալ ցեղի մայրերի կենդանի զանգվածի քանի՞ տոկոսի ձեռք բերման դեպքում է կենդանին համարվում մարմնապես հասուն:**

1) 70%
2) 30%
3) 20%
4) 50%

**15** **Ինչպե՞ս է կոչվում ստամոքսի լորձաթաղանթի բորբոքումն:**

1) էնտերիտ
2) մետրիտ
3) գաստրիտ
4) կոլիտ

**16** **Նշվածներից ո՞րը *չի* համարվում սրտի հիվանդությունների ախտորոշման եղանակ:**

1) ուլտրաձայնային
2) էնդոսկոպիկ
3) գրաֆիկական
4) ռադիոլոգիական

**17** **Ինչպե՞ս է կոչվում հաճախակի միզարտազատումը:**

1) անուրիա
2) պոլիուրիա
3) պոլակիուրիա
4) օլիգուրիա

**18** **Ինչպիսի՞ աղմուկներն են հայտնաբերվում ներսրտենու բորբոքման ժամանակ:**

1) էնդոկարդիալ
2) պլևրալ
3) կարդիոպուլմոնալ
4) պերիկարդիալ

**19** **Ի՞նչ է իրենից ներկայացնում խոլանգիտը:**

1) լեղածորանների բորբոքում
2) լեղաքարերի առաջացում
3) լեղածորանների ուռուցք
4) լեղապարկի բորբոքում

**20** **Ի՞նչ է ցույց տալիս էրիթրոցիտների օսմոտիկ կայունությունը:**

1) ոսկրածուծի ֆունկցիոնալ կարողությունը
2) լեյկոցիտների ակտիվությունը
3) էրիթրոցիտների ակտիվությունը
4) էրիթրոցիտների կյանքի տևողությունը

**21** **Նշվածներից որո՞նք են մեղուների մակաբուծային հիվանդությունները: (3 միավոր)**

1. հաֆնիոզ
2. պիեմիա
3. ամեբիոզ
4. ասպերգիլոզ
5. ասկոսֆերոզ
6. վիրուսային կաթված
7. նոզեմատոզ
8. ակարապիդոզ
9. վարոատոզ

**22** **Նշված եղանակներից որո՞վ կարելի է ախտորոշել վարակիչ հիվանդությունները: (3 միավոր)**

1. մանրէաբանական
2. գործիքային
3. ռենտգենաբանական
4. ֆունկցիոնալ
5. ուլտրաձայնային
6. շիճուկաբանական
7. վիրուսաբանական
8. գծագրական
9. շոշափման

**23** **Նշվածներից որո՞նք են կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունները: (3 միավոր)**

1. ոչխարների ինֆեկցիոն կատառային տենդ
2. լեպտոսպիրոզ
3. լիստերիոզ
4. կատաղություն
5. սիբիրախտ
6. աֆրիկյան ժանտախտ
7. խշխշան պալար
8. բրադզոտ
9. ոչխարների ծաղիկ

**24** **Նշվածներից որո՞նք են դեղանյութերի ներմուծման էնտերալ ուղին: (3 միավոր)**

1. ներզարկերակային
2. ներսրտային
3. ներմկանային
4. բերանային
5. ենթալեզվային
6. ենթամաշկային
7. ուղիղ աղիքային
8. վերմաշկային
9. ներերակային

**25** **Նշվածներից ո՞ր 3 հիվանդություններն են հողային ինֆեկցիա: (3 միավոր)**

1. սպունգանման հիվանդություն
2. բրուցելոզ
3. ժանտախտ
4. գազային գանգրենա
5. կարկամախտ
6. դաբաղ
7. խոզերի կարմրախտ
8. գեղձատապ
9. բոտուլիզմ

**26** **Ընտրել խշխշան պալարին բնորոշ մսեղիքի հետ վարվելու 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. Մսեղիքը օգտագործում են առանց սահմանափակումների:
2. Մսեղիքը օգտագործում են ախտահարված հատվածները հեռացնելուց հետո:
3. Մսեղիքը ապխտում են:
4. Հիվանդ կենդանուն սպանդի *չեն* ենթարկում:
5. Հիվանդ կենդանուց ստացված մսեղիքը օգտահանում են այրելու միջոցով:
6. Մսեղիքը օգտագործում են 2 ժամ ջերմային մշակումից հետո:
7. Մսեղիքը օգտագործում են 30 օր խորը սառեցումից հետո:
8. Մսեղիքը ուղարկում են վերամշակող ձեռնարկություն:
9. Կատարում են նմուշառում և ուղարկում լաբորատորիա:

**27** **Որո՞նք են միզային համակարգի հիվանդությունների համախտանիշները: (3 միավոր)**

1. հեպատոտոքսիկ
2. միզային
3. էոզինոֆիլիա
4. ուրեմիկ
5. կոլիկներ
6. հեպատոլինեալ
7. դեղնախտ
8. այտուցային
9. նեյտրոֆիլիա

**28** **Նշվածներից որո՞նք են լեյկոցիտների տեսակները: (3 միավոր)**

1. ֆիբրոբլաստ
2. ռետիկուլոցիտ
3. մակրոֆագ
4. լիմֆոցիտ
5. մոնոցիտ
6. պոյկիլոցիտ
7. էոզինոֆիլ
8. անիզոցիտ
9. հեպատոցիտ

**29** **Նշել կենտրոնական նյարդային համակարգը գրգռող դեղամիջոցները: (3 միավոր)**

1. նովոկային
2. անալգին
3. անեսթեզին
4. ստրիխնին
5. պարացետամոլ
6. կոֆեին
7. ցեֆտրիաքսոն
8. լիդոկային
9. կորդիամին

**30** **Նշել կրուպոզ պնևմոնիային բնորոշ 3 ախտանշանները: (3 միավոր)**

1. թոքերում բթացման մեծ օջախների առկայություն
2. թոքերում բթացման սահմանափակ օջախների առկայություն
3. բթության հորիզոնական գիծ
4. կայուն տենդ
5. ընդմիջվող տենդ
6. պլևրալ աղմուկների առկայություն
7. էնդոկարդիալ աղմուկ
8. խառը հևոց
9. արտաշնչական հևոց